

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ



ԳՕՍԲՕՆ

1917

361

2-24

1 MAR 2010

361
2.24

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ



ԳՕՍԹՕՆ

1917

0.1.06.2013

42.428

ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Հայ Ազգային Միութեան Ամերիկայի

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ա ն ու ն

Այս կազմակերպութիւնը պիտի կոչուի Հայ Ազգային Միութիւն Ամերիկայի,
(Armenian National Union of America),

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ն պ ա տ ա կ

Միութեան նպատակն է Ամերիկայի Հայ դա-
դութիւն նիւթական եւ բարոյական ուժերը համազը-
րել, եւ զանոնք ի սպաս զնել հետեւեալ երեք հիմնա-
կան նպատակներուն իրագործման.

1. Հայկական ազատագրութիւն,
2. Երկրի կարօտելոց նպաստ եւ Հայաստանի վե-
րաշինութիւն,
3. Դիւանագիտական ձեռնարկ եւ հայանպաստ
փրօփականտ,



64622-67

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Կ ա գ մ

1. Միութեան բաղկացուցիչ տարրերն են, Հայ Առաք. Եկեղեցի, Հայ Աւետարանական Եկեղեցի, Սոցեալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւն, Հայ Սահմանադրական Ռամկապար Կուսակցութիւն եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն:

2. Վերոյիշեալ կազմակերպութիւններ կը մասնակցին Միութեան Կեդրոնական Մարմնին իրենց հաւասարաթիւ երկայացուցիչներովը:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Պ ա շ տ օ ն ա կ ա ն Դ ի ր ք

Միութիւնը իր որդեգրած նպատակներուն իրագործման համար կատարեալ համաձայնութեամբ պիտի գործակցի Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէն նշանակուած ազգային պատուիրակութեան, իբր անոր ներկայացուցիչ մարմինը Ամերիկայի մէջ:

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Հ ա ս ն յ ք ն ե ր

Միութիւնը իր որդեգրած նպատակները պիտի իրագործէ ամերիկահայ գաղութէն ստացած կամա-

ւոր նուէրներէ, հանդանակութիւններէ եւ կանոնաւոր տուրքերէ զոյացած հասոյթներով:

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Դ ի լ ա ն ' ե լ Վ ա ր չ ու ք ի լ ն

1. Միութեան Կեդրոնական Մարմնին մայր դիւանը կը բաղկանայ ատենապետէ, դեր ատենապետէ, առաջին ատենադպրէ, երկրորդ ատենադպրէ, երրորդ ատենադպրէ եւ հաշուեքննիչէ:

2. Վարչութիւն.— Վերոյիշեալ մայր դիւանը հաւաքարար կը կազմէ Միութեան Կեդրոնական Մարմնին Վարչութիւնը:

3. Միութիւնը կրնայ ունենալ մնայուն եւ անժամեայ յանձնախումբեր, եւ վճարեալ կամ անվճար ուրիշ պաշտօնեաներ կամ գործիչներ, եթէ անոնց պէտք տեսնէ:

ՅՕԴՈՒԱԾ Է.

Կ ա ն ն ա գ ր ու ք ի լ ն

Միութիւնը իր գործին ուղղութեան եւ կանոնաւորութեան համար կրնայ որդեգրել պատշաճ կանոններ:

ՅՕԴՈՒԱԾ Ը .

Մ ի ն լ ք ե ա ն Գ ո յ ո լ ք ի լ ն ը

1. Միութիւնը իր գոյութիւնը պիտի պահէ եւ իր գործը պիտի շարունակէ մինչեւ որ Հայկական Ազատագրութիւնը իրականանայ :

2. Միութիւնը իր կազմալուծման պահուն իր տրամադրութեան տակ ունեցած գոյքն ու դրամը յանձնելու է Հայաստանի ազգային բարձրագոյն իշխանութեան, զանոնք գործածելու հայրենիքի մէջ ազգային պէտքերու համար :

3. Միութիւնը կը կազմալուծուի իր բաղկացուցիչ եօթը տարրերէն չորսին կամ քոյ կամ անոնց հրաժարումով :

ՅՕԴՈՒԱԾ Թ .

Բ ա ր ե փ ո խ ո լ մ

1. Միութեան Սահմանադրութեան Ա. Բ. Գ. յօդուածները որոնք Անուն, Նպատակ եւ Պաշտօնական Դիրք կը կոչուին անփոփոխելի են, իսկ միւս յօդուածները կրնան բարեփոխուիլ, յաւելումով եւ յապաւումով Միութեան Կեդրոնական Մարմնի անդամներուն հինգ եօթներորդին քուէովը :

2. Բարեփոխումի պէտքը զգացուած պահուն առ

նուազն ամիս մը առաջ պէտք է գրաւորապէս զեկուցանել Միութեան Կեդրոնական Մարմնին անդամներուն մատնանշելով բարեփոխելի կէտերը :

3. Բարեփոխման առաջարկը գրաւոր ըլլալու է :



ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ա ն դ ա մ ա կ ց ու ք ի ո ն

1. Միութեան Կեդրոնական Մարմնին անդամները պիտի ըլլան Միութիւնը բաղկացնող տարրերու երեքական լիազօր ներկայացուցիչները, որոնց լիազօրութիւնը պէտք է հաստատուած ըլլայ զիրենք ընտրող մարմիններու պաշտօնագրերով:

2. Միութեան Կեդրոնական Մարմնին նորընտիր անդամները գործի սկսելէ առաջ հետեւեալ ուխտն ընելու են.

«Ես.....իրր անդամ Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, յանուն տառապեալ ազգիս եւ գերեալ հայրենիքիս, կ'ուխտեմ ծառայել այս Միութեան իմ բոլոր կարողութիւններովս, ամենայն հաւատարմութեամբ եւ անաչառութեամբ»:

3. Այս ուխտն ըլլալու է ժողովի մը մէջ յօտընկայս, որմէ յետոյ ատենապետն ընդունելու է անդամը պաշտօնապէս:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Պ ա շ տ ո ն Է ու ք ի ո ն

1. Միութեան պաշտօնեաներն են վարչութիւն,

ատենապետ, դերատենապետ, առաջին ատենադըպիր, երկրորդ ատենադըպիր, երրորդ ատենադըպիր, գանձապետ եւ հաշուեքննիչ որոնք պէտք է ընտրուին Միութեան Կեդրոնական Մարմնին անդամներէն:

2. Միութեան մայր դիւանը հաւաքաբար ի պաշտօնէ կը կազմէ վարչութիւնը:

3. Վարչութեան պարտականութիւններն են, գործադրել Միութեան որոշումները, կատարել անոր գործառնութիւնները, հսկել պաշտօնէից գործունէութեան, եւ Միութեան Կեդրոնական Մարմնի անդամները ժողովի հրաւիրել ու ժողովի օրակարգը պատրաստել:

4. Միութեան Կեդրոնական Մարմնի մայր դիւանի ընտրութիւնը պիտի կատարուի Միութեան տարեգլխի ժողովին մէջ գաղտնի քուէարկութեամբ եւ Միութեան անդամներուն մեծամասնութեան քուէովը:

5. Միութեան մայր դիւանի պաշտօնավարութեան շրջանը պիտի ըլլայ մէկ տարի:

6. Միութեան նորընտիր վարչութեան անդամներու պաշտօնավարութիւնը կ'սկսի ամեն տարի Յունուարի սկիզբէն:

7. Վարչութեան անդամները եւ պաշտօնեաները իրենց գործն ու պարտականութիւնը պիտի կատարեն այս երկրին մէջ ընդունուած խորհրդարանական ըսկզբանց համաձայն:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Գ ր ա մ ա կ ա ն Գ ո ղ ա ն ն ու լ ք ի ռ ն

1. Միութեան բոլոր դրամական գործառնութիւնները պիտի կատարուին առաջնակարգ եւ վստահելի դրամատան մը միջոցաւ:

2. Միութեան բոլոր դրամական հասոյթը ի պահ պիտի դրուի որոշուած դրամատան մէջ:

3. Միութեան նպատակներուն կամ անոնցմէ մէկին գործադրման ինչպէս նաեւ ընթացիկ ծախուց համար դրամատունէն դրամ պիտի հանուի Միութեան Կեդրոնական Մարմնի անդամներուն առնուազըն երկու երրորդին որոշումովը:

4. Դրամատունէն դրամ պիտի հանուի դրամատան վրայ քաշուած չէքերով, եւ չէքեր պէտք է ըստորագրուին Միութեան դանձապետին եւ ատենապետին կողմէն:

5. Տրուած որոշման համաձայն դրամատունէն դրամ հանելու համար դանձապետին եւ ատենապետին ստորագրած չէքին պէտք է կցել Միութեան Կեդրոնական Մարմնի անդամներուն երկու երրորդին ստորագրութեամբը վաւերացուած եւ դրամատան ուղղուած հրամանագիր մը:

6. Միութեան ելքն ու մուտքը մանրամասնօրէն ապացուցանելու համար դրամատան վրայ քաշուած

չէքերը ինչպէս նաեւ անոնց համապատասխան ստացադրերը (voucher) պահուելու են:

7. Վարչութիւնը եւ դանձապետը երեք ամիսն անգամ մը հաշիւ ներկայացնելու են Միութեան Կեդրոնական Մարմնին: Եռամսեայ հաշուեկշիռը ներկայացուելէ առաջ պէտք է որ հաշուեքննիչին կողմէն քննուած եւ գրաւորապէս վաւերացուած ըլլայ:

8. Եռամսեայ հաշուեկշիռները նոյնութեամբ կամ ամիօրի վիճակի մէջ պէտք է հրատարակուի Միութեան Կեդրոնական Մարմնին կողմէ՝ մամուլով կամ շրջաբերականներու միջոցաւ:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յ ա ն ձ ն ա խ ու լ ք ե ր

1. Միութեան Կեդրոնական Մարմինը պիտի ունենայ երկու տեսակ յանձնախումբեր, առժամեայ եւ մնայուն:

2. Առժամեայ յանձնախումբեր կրնան ընտրուիլ Միութեան Ժողովներուն մէջ պատահական խնդիրներ քննելու, ուսումնասիրելու եւ կամ մասնաւոր դործեր տեսնելու եւ արդիւնքը Ժողովին տեղեկագրելու համար:

3. Մնայուն յանձնախումբեր պիտի ընտրուին Միութեան տարեգլխի Ժողովին մէջ եւ պիտի պաշ-

տօնավարեն մէկ տարի :

4. Մնայուն յանձնախումբերու պարտականութիւնը պիտի ըլլայ իրենց յատկացուած գործը հետապնդել եւ կատարել, եւ տրուած խնդիրներ քննել, աւսումնասիրել եւ արդիւնքը տեղեկագրել Միութեան Կեդրոնական Մարմինն :

5. Մնայուն յանձնախումբերն են .

ա . Ազատագրական

բ . Նպաստի եւ վերաշինութեան

գ . Դիւանադիտութեան եւ արտաքին փրօփականտի

դ . Հանդանակութեան եւ ներքին փրօփականտի

6. Յանձնախումբերու անդամներուն թիւը կընայ ըլլալ երեք կամ հինգ ըստ գործի պահանջին :

7. Յանձնախումբեր պարտին երեք ամիսն անգամ մը կամ եթէ պահանջուի աւելի յաճախ գրաւոր տեղեկութիւն տալ Միութեան՝ իրենց գործունէութեան շուրջ :

8. Յանձնախումբեր կընտրեն իրենց ղեկանները :

ՅՕԴՈՒԱԾ Ե .

Ժ ո ղ ո վ ն Ե ր

1. Միութեան Կեդրոնական Մարմինը պիտի ու-

նենայ կիսամսեայ, եռամսեայ եւ տարեկան ժողովներ :

2. Կիսամսեայ ժողովներ տեղի պիտի ունենան իւրաքանչիւր ամսուան առաջին եւ երրորդ ուրբաթ օրերու երեկոները :

3. Եռամսեայ ժողովներ տեղի պիտի ունենան Դեկտեմբերի, Մարտի, Յունիսի եւ Սեպտեմբերի առաջին ուրբաթ օրերու երեկոները :

4. Եռամսեայ ժողովներուն օրակարգը պիտի ըլլայ վարչութեան ելեւմտական հաշուետուութիւն եւ այլ գործունէութիւններու տեղեկատուութիւն ինչպէս նաեւ յանձնախումբերու գործունէութեան տեղեկագրութիւնները :

5. Տարեկան ժողովը պիտի գումարուի իւրաքանչիւր տարուայ Դեկտեմբերին երկրորդ շաբթուան ուրբաթ օրը երեկոյին, կամ նոյն շաբթուան մէջ ուրիշ յարմարագոյն օր մը :

6. Դիւանը իրաւունք ունի ի հարկին Միութեան Կեդրոնական Մարմինը բացառիկ ժողովի հրաւիրել, ինչպէս նաեւ պարտաւոր է բացառիկ ժողովի հրաւիրել երբ Միութեան հինգ անդամներ գրաւորապէս պահանջեն :

7. Ժողովի մը գումարումէն առնուազն չորս օր առաջ վարչութիւնը կամ առենադպիրը Միութեան Կեդրոնական Մարմնի անդամներուն ղրկելու

է ժողովի հրաւիրագրեր անոնց մէջ յիշելով ժողովին օրակարգը :

8. Բացառիկ ժողովներու համար վարչութիւնը կամ ատենադպիրը Միութեան Կեդրոնական Մարմնի անդամներուն ղրկելու է ժողովին նպատակը պարունակող հրաւիրագրեր :

9. Օրինական քիւ (**quorum**) .— Տարեկան ժողովը օրինաւոր կը նկատուի Միութեան Կեդր. Մարմնի անդամներուն առնուազն հինգ եօթներորդին ներկայութեամբը, իսկ միւս ժողովները օրինաւոր կը նկատուին տասնեւեկ անդամներու ներկայութեամբ :

10. Ժողովներու գործակարգը հետեւեալն է .

ԳՈՐԾԱԿԱՐԳ ԿԻՍԱՄՍԵԱՅ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ

1. Ժողովի բացում
2. Նախորդ նիստի ատենագրութեան ընթերցում եւ վաւերացում :
3. Դիւանի տեղեկատուութիւն
4. Առժամեայ յանձնախումբերու տեղեկատուութիւն
5. Մնայուն յանձնախումբերու տեղեկատուութիւն եթէ կանխաւ պահանջուի :
6. Օրակարգ
7. Նոր գործեր
8. Փակում

Ժողովը իրաւունք ունի մեծամասնութեան քուէով ստիպողական խնդիրներու նախապատուութիւն տալու եւ օրակարգը փոխելու :

ԵՌԱՄՍԵԱՅ ԺՈՂՈՎՆԵՐ

1. Ժողովի բացում
2. Նախորդ նիստի ատենագրութեան ընթերցում եւ վաւերացում
3. Վարչութեան ելեւմտական հաշուետուութիւն
4. Տեղեկատուութիւն մնայուն յանձնախումբերու որոնք են
 - ա. Դիւանագիտական եւ արտաքին փրօփականտի .
 - բ. Հանգանակութեան եւ ներքին փրօփականտի .
 - գ. Ազատագրական
 - դ. Նպաստի եւ վերաշինութեան
5. Նոր գործեր
6. Փակում

ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Ժողովի բացում
2. Նախորդ ժողովի ատենագրութեան ընթերցում

- ցում
3. Դիւանի տարեկան տեղեկատուութիւն
 4. Յանձնախումբերու տարեկան տեղեկատուութիւն
 5. Դիւանի ընտրութիւն
 6. Մնայուն յանձնախումբերու ընտրութիւն
 7. Վաւերացում ատենագրութեան
 8. Փակում :

ԲԱՅԱՌԻԿ ԺՈՂՈՎՆԵՐ

1. Ժողովի բացում
2. Օրակարգ
3. Փակում

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Հ ր ա պ ա ր ա կ ա յ ի ն ժ ո ղ ո Վ ն ե ր .

1. Միութիւնը պիտի սարքէ հրապարակային ժողովներ եւ հանդէսներ, առաջին, Հայ Ազգային Միութեան նպատակն ու դորժը ծաւալելու եւ երկրորդ, Միութեան որդեգրած նպատակներուն եւ պէտքերուն համար դրամ հանգանակելու համար :
2. Միութիւնը կը հաստատէ ազգային տուրքի դրութիւնը որուն պիտի կրնայ մասնակցիլ ամեն հայ :
3. Միութիւնը իրաւունք ունի եւ պարտի երբեմն

երբեմն հրահանգ տալ որ ամերիկահայ դաղութիւն մէջ ուէ կազմակերպութիւն կամ մարմին անջատ հանգանակութիւն չընէ հետեւեալ պայմաններու տակ .

ա. Միութեան որդեգրած նպատակներուն (ազատագրութիւն, վերաշինութիւն, դաղթականներու նպաստ եւ հայկական դատի փրոփականտ) ի նպաստ ուէ անջատ ձեռնարկ տեղի պիտի չունենայ ուէ տեղ, ուէ ժամանակ եւ ուէ մարմնի կողմէ :

բ. Միութեան հանգանակային ժողովներու շըրջանին ուէ անջատ ձեռնարկ տեղի պիտի չունենայ ուէ նպատակի համար այն տեղերը, ուր Միութեան հանգանակութիւնները կատարուած չեն դեռ :

գ. Ուէ ժամանակ ուէ տեղ եւ ուէ մարմնի կ'ո ղ մ է ո եւ է ա ն ջ ա տ ձեռնարկ չպիտի կատարուի առանց ձեռնարկին նպատակը եւ մատակարարող մարմնին կամ կազմակերպութեան անունը որոշ կերպով թերթերու կամ յայտագրերու մէջ յայտարարելու :

դ. Ուէ անջատ ձեռնարկ ի նպաստ Միութեան չկրնար կատարուիլ առանց Միութեան Կեդրոնական Մարմնի վարչութեան նախապէս արտօնութիւնը ըստանալու :

Մ ա ս ն ա ն ի լ զ ե ր

1. Միութիւնը կը կազմէ մասնաճիւղեր Ամերիկայի հայաբնակ վայրերուն մէջ:

2. Մասնաճիւղ կազմելու համար, Միութիւնը հրահանգ զրկելու է մասնաճիւղ կազմելիք տեղին վրայ գտնուող՝ Միութեան բաղկացուցիչ տարրերու մասնաճիւղներուն, եթէ կան, որպէսզի անոնք իրարու հետ խորհրդակցելով կազմեն Միութեան մասնաճիւղը,

3. Վերոյիշեալ խորհրդակցութեան կրնան մասնակցիլ Միութեան բաղկացուցիչ տարրերուն մասնաճիւղեր հաւասարաթիւ (մեկէն մինչեւ երեք) ներկայացուցիչներով.

4. Եթէ գաղութի մը մէջ Միութեան բաղկացուցիչ տարրերէն ոմանք կամ մին միայն մասնաճիւղ ունին, այն ատեն գոյութիւն ունեցող Մասնաճիւղը կամ մասնաճիւղեր կրնան Միութեան Մասնաճիւղը կազմել:

5. Մասնաճիւղեր պիտի գործեն Միութեան Կեդրոնական Մարմնէն տրուած հրահանգներուն համաձայն:

6. Միութեան Մասնաճիւղերու քով հաւաքուած գրամներ, գոյք եւ գրքեր կը պատկանին Հայ

Ազգային Միութեան, եւ մասնաճիւղեր կը նկատուին իբր անոնց աւանդապահ:

7. Միութեան մասնաճիւղերը իրենց քով հաւաքուած գրամը շարաթուան մը միջոցին զրկելու են Միութեան Կեդրոնական Մարմնին, իսկ հանդանակութեան հաշիւը փակելու են առ առուելն երեք ամսուայ միջոցին:

8. Իւրաքանչիւր գրամի առաքման մասնաճիւղեր հաշուեցուցակ մը դժելու են որ ցուցնէ թէ զրկուած գումարը ընդունած է, միանուազ նուիրատուութենէ, կամ հանդանակութենէ եւ կամ տուրքէ: Հաշուեցուցակին մէջ յիշուելու են նաեւ այն նուիրատուութիւնները կամ գումարները որ կանխորոշ նպատակի մը համար տրուած կամ հաւաքուած են:


9. Մասնաճիւղեր հաղորդելու են Միութեան իրենց դիւանի անդամներուն անուններն ու հասցէները:

10. Մասնաճիւղեր իրենց դիւաններն ընտրելու են իւրաքանչիւր տարիի Դեկտեմբերին սկիզբի շարաթուան միջոցին,

11. Իւրաքանչիւր տարիի Դեկտեմբեր 30-ին մասնաճիւղերու գրամական առաքումները կատարուած եւ Միութեան հետ ունեցած հաշիւները փակուած ըլլալու են:

12. Մասնաճիւղեր Միութեան որդեգրած նը-

89-22949



պատահներուն իրազործումին ջանագիր եւ Միութեան կանոնադրութեան ուղղակի եւ անուղղակի իրենց պատկանող յօդուածներուն տրամադրութեանց դործադրումին հոգածու ըլլալու են :

ՅՕԴՈՒԱԾ Ը .

Բ ա ռ ե փ ո խ ու թ իւ ն

1. Այս կանոնագրի ունէ յօդուածը կրնայ բարեփոխուիլ, ջնջուիլ եւ անոր դործադրութիւնը առժամացէս յետաձգուիլ Միութեան Կեդրոնական Մարմնի ունէ ժողովի մը մէջ անդամներուն երկու երրորդին քուէովը :

2. Բարեփոխումի համար պէտք է առնուազն մէկ ամսուան զեկոյց տալ Միութեան Կեդրոնական Մարմնի անդամներուն յիշելով բարեփոխելիք յօդուածը եւ առաջարկուած փոփոխութիւնը :

Վ Ա Ի Ե Ր Ա Յ Ո Ւ Մ

Մենք, Հայ Ազգային Միութիւն Ամերիկայի բաղկացուցիչ տարրերուն լիազօր ներկայացուցիչներս, մեզ տրուած իշխանութեան համաձայն, եւ իբր անդամ Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, կընդունինք եւ կ'որդեգրենք վերոգրեալ Հայ Ազգային Մի-

ութեան Ամերիկայի Սահմանադրութիւնն ու Կանոնադրութիւնը :

Ի վաւերացում եւ ի վկայութիւն կ'ստորագրենք

ԼԻԱԶՕՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Մուշեղ Արքեպիսկոպոս

Շահէ Ծ . Վրդ . Գասպարեան

Մարկոս Տ . Մանուէլեան

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Պատ . Կ . Մ . Մանավեան

Ս . Դ . ՀՆԶ . ԿՈՒՍՍԿՅՈՒԹԵԱՆ

Յակոբ Յ . Բարեջանեան

Մարգար Զագիկեան

Հ . Յ . ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ

Մանուկ Համբարձումեան

Միքիեան Օգանեան

Զաւէն Նալպանտեան

ՎԵՐ . ՀՆԶ . ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ

Միհրան Սվազլեան

Տր . Յովհաննէս Ծովիկեան

Հրաչ Երուանդ

Հ. Ս. ՌԱՄԿ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Արմենակ Ն. Նազար

Միֆայել Յովհաննէսեան

Սարգիս Մալեմէզեան

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

Բարգէն Եպիսկոպոս Կիլիկէսէրեան

Գարեգին Մ. Կիրակոսեան

Յակոբ Գ. Դերձակեան

Օգոստոս 28, 1917



.50

9m-

//

//

//

//

//

//

« Ազգային գրադարան



NL0221742

42.928

1
2